

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արգավանդ Կահույք ՍՊԸ-ն ԱՄՄՀ-ԷԱՃԱՊԶԲ-25/40 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>Արևելյան պատ (պատուհանների հատված) Պատուհանների միջև առկա սյուների երեսպատում՝ շպոնապատ ՄԺՓ-ի և կաղնու փայտի համադրությամբ, բարձրակարգ ներկերով և լաքով եռաշերտ մշակմամբ: Մարմարե կամ գրանիտե պատուհանագոգերի տեղադրում, որի գույնը և տեսքը կհամաձայնեցվի Պատվիրատուի հետ: Արևմտյան պատ և առաստաղ Դեկորատիվ ֆոտոպաստառ, գունավոր տպագրությամբ՝ ըստ Եսքիզ-նկարների: Պահարան (комод)՝ շպոնապատ ՄԺՓ-ի և կաղնու փայտի համադրությամբ 130սմ երկարությամբ, 75սմ բարձրությամբ և 50սմ լայնությամբ: Վերջնական չափերը՝ ըստ տեղադիրքի, հաշվի առնելով նաև այլ գույքերի տեղադրման սխեման: Առաստաղին կփակցվի դեկոր՝ շպոնապատ ՄԺՓ-ից, պարամետրիկ դիզայնի սկզբունքով, ուղղանկյուն, 3քմ մակերեսով, որից կկախվեն 3 հատ loft ոճի ճոպաններով և լեդ լուսատուներով ջահեր, որոնք կհամաձայնեցվի Պատվիրատուի հետ՝ ներկայացնելով 3 նմուշ, որոնցից էլ կկատարվի վերջնական տարբերակի ընտրությունը: Տեսքը՝ ըստ Եսքիզ-նկարների: Հարավային պատ (հեռուստացույցի հատված) Պատի ամբողջական երեսպատում ըստ Եսքիզ-նկարների, փայտային հատվածները՝ շպոնապատ ՄԺՓ-ի և կաղնու փայտի համադրությամբ, կանաչ հատվածը՝ փորագրված ՄԺՓ, բարձրակարգ ներկերով և լաքով եռաշերտ մշակմամբ: Բարձրորակ լեդ լուսավորության նախատեսում՝ կհամաձայնեցվի Պատվիրատուի հետ: Հյուսիսային պատ (դեկորատիվ հատված) Ամբողջ պատի երկայնքով շպոնապատ ՄԺՓ-ով հավաքել շնջանակ, որի մեջ 3D ձևաչափով կհավաքվի սաղարթախիտ տերևներ, իսկ կենտրոնում Մասիս համայնքի մետաղական տարբերանշանը՝ բարձրորակ և քողարկված լեդ լուսավորությամբ՝ ապահովելով տարբերանշանի եզրային լուսավորությունը: Ընդ որում,</p>

տարբերանշանը կհամաձայնեցվի Պատվիրատուի հետ՝ ներկայացնելով տարբերանշանի լուծման 3 աշխատանքային էքզիզ, որոնցից էլ կատարվելու է վերջնական տարբերակի ընտրությունը: Տերևները կլինեն մի քանի (5) հարթության վրա՝ 3D էֆեկտ ստանալու համար: Դեկորատիվ պատը՝ տերևների հատվածը, կձևավորվի կանաչ գույնի օրգանական ապակուց (3-4մմ հաստությամբ, բազմաշերտ): Ապահովել դեկորատիվ պատի ամբողջական լուսավորությունը: Նյութերը կհամաձայնեցվի Պատվիրատուի հետ: Խորհրդակցությունների սեղան և փափուկ կահույք Սեղանի երկարությունը՝ 300սմ, կենտրոնում փոսորակ՝ ծաղկային կոմպոզիցիաներ տեղադրելու համար: Սեղանը կունենա էլիպսաձև տեսք, սեղանածածկը՝ երկլերտ, 36մմ հաստությամբ ՄՃՓ-ից պատրաստված, ամբողջությամբ ներկապատ և լաքապատ, ոտքերը կլինեն մետաղյան կամ նույն ՄՃՓ նյութից կամ երկուսի համադրությամբ (կհամաձայնեցվի Պատվիրատուի հետ): Սեղանի կողքին դրվող աթոռներն՝ ըստ էքզիզ-նկարների, նույնանման, ընդհանուր թվով 14 հատ, կհամաձայնեցվի Պատվիրատուի հետ՝ ներկայացնելով 3 նմուշ, որոնցից էլ կկատարվի վերջնական տարբերակի ընտրությունը: Փափուկ կահույքը ներառում է՝ անկյունային բազմոց, երկու բազկաթոռներ, դեկորատիվ բարձեր (4 հատ) և կլոր գրասեղան՝ շպոնապատ ՄՃՓ-ի և կաղնու փայտի համադրությամբ, Փ120սմ, բարձրությունը՝ 55սմ: Անկյունային բազմոցի երկարությունը՝ 500սմ: Փափուկ կահույքի՝ բազմոցի և բազկաթոռների հիմնակմախքը՝ փայտից, սպունգը՝ 40կգ/մ3, երեսպատված բարձրորակ կտորով, բազկաթոռների ոտքերը փայտից, ամբողջական տեսքը՝ ըստ էքզիզ-նկարի, իսկ գույնը կհամաձայնեցվի Պատվիրատուի հետ: Կահույքի չափերը համադրելի կլինեն տվյալ հատվածում էքզիզով ներկայացվածին՝ պահպանելով դրանում առկա հեռավորությունները և դիզայնը: Այլ պայմաններ Տեխնիկական բնութագրում և էքզիզ-նկարներում առկա անհամապատասխանությունների դեպքում հիմք են ընդունվելու են էքզիզ-նկարները՝ բացառությամբ խորհրդակցությունների սեղանի շուրջ դրվող աթոռների: Ապրանքների պատրաստման համար օգտագործվող նյութերը կլինեն նոր (չօգտագործված): Ապրանքի մատակարարումը կհամարվի ավարտված բոլոր ապրանքների վերջնական տեղադրումից հետո միայն:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

АРГАВАНД МЕБЕЛЬ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЦУУՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/40 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	